

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի  
հաշմանդամություն ունեցող անձանց  
հարցերով զբաղվող մարզային  
հանձնաժողովի նիստի  
14.12.2015թ.

#### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

**ՀՀ Արագածոտնի մարզպետ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ Ս.Սահակյանի հանձնարարությամբ նիստը վարում էր ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ տիկին Ն.Մովսիսյանը:**

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին մարզպետարանի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի 9 անդամներ, հարգելի պատճառով բացակայում էին 2 անդամներ:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին նաև «Ունիտոն» ՀԿ-ի հանրային կապերի ղեկավար Մարիաննա Չալիկյանը, “Կանթեղ Արագածի” ՀԿ-ի ղեկավար Արսեն Պապիկյանը “Հայաստանի կույրերի միավորման” Աշտարակի ԿՍԿ վարչության պետ Սերգեյ Այվազյանը:

#### Օրակարգ

- 1. ՀՀ Արագածոտնի մարզում 2015թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց աջակցելու ուղղությամբ կատարված աշխատանքների մասին /զեկ.մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ , հանձնաժողովի քարտուղար Գ.Դանիելյան/**
- 2. Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար 2016 թվականը հավասար հնարավորությունների տարի հայտարարելու կապակցությամբ ՀՀ Արագածոտնի մարզում անցկացվող միջոցառումների մասին /զեկ.մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխ. մասնագետ Ն. Դավթյան/**
- 3. Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ /մասնագիտացված/ հաստատություններ հաշմանդամություն ունեցող անձանց, ծերերի և երեխաների ուղեգրման կարգը / զեկ. մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ Ա. Մովսիսյան/**

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ հանդես եկավ տիկին Գ. Դանիելյանը: Ներկայացվեց հաշվետու ժամանակաշրջանում մարզի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, կրթական, առողջական խնդիրների լուծման, նրանց համար տեղաշարժման հնարավորություններ ստեղծելու, տարբեր կառույցների հետ համագործակցության արդյունքում կատարված աշխատանքների և առկա չլուծված հարցերի վերաբերյալ տեղեկատվություն: Համագործակցելով խնամակալության և հոգաբարձության մարմինների, հանրակարթական դպրոցների տնօրենների, միջազգային, տեղական հասարակական կազմակերպությունների հետ, ուսումնասիրվել և անհրաժեշտության դեպքում համապատասխան աջակցություն է ցուցաբերվել հաշմանդամություն ունեցող ընտանիքներին: Ընթացիկ տարում աշխատանքներ են տարվել մարզում ներառական կրթության արմատավորման ուղղությամբ: 2015 թվականից գործում են ներառական կրթությամբ 2 դպրոցներ՝ Աշտարակի Ն. Սիսակյանի անվան ավագ և Պ. Պոռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցները: Զեկուցումը կցվում է: /

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցողը նշեց, որ մարզում հաշմանդամություն ունեցող անձանց համար 2016 թվականը հավասար հնարավորությունների տարի հայտարարելու կապակցությամբ անցկացվող միջոցառումների ծրագրում ներառված են հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական վերականգնողական-տեխնիկական միջոցներ տրամադրելու, համայնքներում տեղաշարժման համար մատչելի պայմանների ապահովման, աշխատատեղերի ստեղծման, հաշմանդամություն ունեցող երեխաներին կրթության մեջ ներառելու, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքների կազմակերպման մասին հարցեր:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ Անահիտ Մովսիսյանը նիստի մասնակիցներին ներկայացրեց ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112 արձանագրային որոշումը երեխաների, տարեց և /կամ/ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և /կամ/ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին: Զեկուցողը նշեց, որ աշխատանքները կարգի համաձայն իրականացնելու դեպքում մեծանում է համագործակցությունը մարզի ՍԱՏԳ-երի հետ:

Ելույթներով և առաջարկություններով հանդես եկան Ունիսոն» ՀԿ-ի հանրային կապերի ղեկավար Մարիաննա Չալիկյանը, «Հայաստանի կույրերի միավորման» Աշտարակի ԿՍԿ վարչության պետ Սերգեյ Այվազյանը, «Կանթեղ Արագածի» ՀԿ-ի ղեկավար Արսեն Պապիկյանը:

Քննարկումն ամփոփեց մարզպետի տեղակալ Ն. Մովսիսյանը :

Քննարկվող հարցի վերաբերյալ ընդունվեց **որոշում՝**

#### **Հանձնարարել՝**

- 2015թ. ընթացքում կատարված աշխատանքները գնահատել բավարար:
- Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցելու ուղղությամբ աշխատանքների կատարման գործընթացին առավելագույնս ուշադրություն դարձնել համայնքների մասնակցությանը:
- Կակորել մարզում, համայնքներում անցկացվող մշակութային միջոցառումներին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությանը:
- Հաստատել <<2016 թվականը հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու կապակցությամբ ՀՀ Արագածոտնի մարզում անցկացվող միջոցառումների 2016թ. ծրագիրը>>
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112 արձանագրային որոշման կատարումն ապահովելու համար այն ուղարկել նաև մարզի ՍԱՏԳ-ներին:

Հանձնաժողովի նախագահ՝

Ս.Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ.Դանիելյան